


Թերթ կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DİRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

— Огговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

2. ՏԱՐԻ

— ՅՈՒՆԻՍ 18 ԵՐԵՎԱՆԻ 1902 —

ԹԻՒ 253

ԱԶԳԱՅԻՆ

Ի նպատակ Ազգ. Հիւանդանոցի տրուած վեր-
ջին նուագահանդէսին զուտ հասոյթն հղած է
853 օսմ. ոսկի:

— Ամասիոյ ազգայինք Վեհ. Հայրապետին
նուիրեր են եկեղեցւոյ ատենանի համար մետաք-
սեայ ծանրագին գորգ մը, զոր Ամասիոյ մէջ
յառկապէս պատրաստել տուած են եղեր:

— Կրէտէի ազգային եկեղեցիին 18 կալ-
ուածները՝ որ տարին 18,000 դրշ. հասոյթ ու-
նին եղեր, նորոգուեր են այս օրերս՝ 150 ոսկի
հաւաքուելով:

— Մանչէսթրի եկեղեցւոյն մէջ ամսոյն 26ի
կիրակի օրը զոհաբանական աղօթք մատուցուեր
և Տ. Զուգայեցի քարոզ խօսեր է: Հարաւ Ափրի-
կէի հաշտութեան առթիւ:

— Ամերիկայի Պոսթրն քաղաքի ազգայինք
5 ոսկի ղրկած են Ուրֆայի որսանոցին:

— Նպատուից Յանձնաժողովը որոշեր է յա-
տուկ շրջաբերականաւ ազգայնոց գիծութեանը
գիծել, Որբանոցներու օգնելու համար:

(Այս տողերը տեղւոյս Որբանոցներու շաղ-
րութեանը կը յանձնենք և կառավարկենք որ

հակառակ ընկենութեան կանոնադրոյն՝ ատենէ մը
ի վեր գանձապետին քով՝ գտնուած 50-60 ոս-
կին նպատուից Յանձնաժողովին միջոցաւ իր
նպատակին գործածէ:

— Էլմիածնայ ձեռագրատան մէջ գտնուեր
է Եզնիկի ձեռագիրն և բանասիրական հին եր-
կասիրութեան մը արաբերէն թարգմանութիւնը:

— Կարնոյ առաջնորդարանէն Պատրիարքա-
րանի հեռագրուեր է թէ՛ երկրաչարժէ քնասեալ
ազգային եկեղեցւոյ, վարժարանին և ուրիշ շէն-
քերու նորոգութեան կամ վերաշինութեան հա-
մար 3000 լիրայի չափ պէտք կայ:

— Ներկայ ամսոյս 10էն սկսեալ, բռնապե-
տական հրամանաւ, Պոստոյ բոլոր Հայաթերթե-
րու մէջէն «Ազգային լուրեր» կամ «Ազգային
բրոնիկ» խորագիրը շնչուելով, անոր տեղ՝ «Պատ-
րիարքարանի լուրեր»ը յաշորդած է, որովհետեւ
«Ազգային» բառն ալ «Աղատութիւն» բառին պէս
խիստ վտանգաւոր է եղեր... Տպագրական
տեսչութեան անօրէնք իր այս իշխիզաւորութեանը
փոխարէն պալայի տատիճան առեր է:

— Տեղւոյս աւագերէց Տ. Մարտիրոս քահա-
նան անցեալ շաբթու Պուրկաղ գնաց, Տ. Գարե-
գինի խնդիրը քննելու համար:

— Մագսոտ ազգայի մանածի գործարանի կա-

բոտ գործաւորներուն ի նպաստ տրուած թաւա-
րական երեկոյթէն 105 ֆր. զուտ հասոյթ գո-
յացած է:

— Տրապչոնի մէջ Հայ եկեղեցիի մը հիմնա-
կէքը կատարուեր է:

— Ռուսները քօլէճէն այս տարի 6 հայ շրջա-
նաւարտներ ելած են, իսկ կառավարական քա-
ղաքային բժշկական վարժարանէն 1 շրջանաւարտ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 26 յունիս — Պուլկարիոյ իշխանը
այս առաւել Վիեննա հասաւ և ուղղակի Բարիզ
ուղևորեցաւ:

— Կատարուած Պուլկարական փոխառութիւ-
նը յառաջիկայ օգոստոսին հրապարակ պիտի
հանուի, որոնց արժէթուղթերը Բարիզի, Ֆը-
րանքֆորթի և Պելճիքայի սակարանները պիտի
ընդունին:

— Կէս-պաշտօնական լրագիր մը կըսէ թէ
Պուլկարիոյ իշխանը մօտեցաւ Աւստրիոյ կայսեր
պիտի այցելէ:

— Այս տարի օգետն աննպաստ ըլլալով, վար-
դի տունկերը Գըզանլըգի մէջ ֆլաստուած են, ո-
րով եւրոպական հրապարակներու վրայ վարդի
իւղին գինը բարձրանալու վրայ է:

— Մեզը առատ պիտի ըլլայ այս տարի:

— «Վէչէրնա Բօսթ»-ի ըսածին նայելով, 10
պուլկար գործաւոր առումնական սահմանադ-
րին մօտէն անցած ատեննին, առման զինուոր-
ներուն յարձակումին ենթարկուեր են, որոնց-
մէ 5 հոգին մեռեր իսկ միւս 5ը փախեր են:

— Ֆիլիպէի թանգարանին մէջ խոշոր գողու-
թիւն մը եղած է, և այս պատճառով անոր կարգ
մը վարիչները հարցաքննութեան աակ են: Ա-
սոնցմէ Պիլէչէզով անուն անձը զգալով որ զեղ-
ծութիւնը մօտ օրէն մէջտեղ պիտի ելնին, իր շար-
ժուն և անշարժ կալուածներուն ամենքն ալ ծա-
խելով Ֆիլիպէին փախած է: Գողցուած հնութիւն
ներուն արժէքը 500,000 ֆրի կը հասնի:

Լոնտոն — Անգլիոյ թագաւորին վիճակը ծա-
նրը է: Թագադրութեան հանդէսները անսահման
կերպով յետաձգուած են: Այդ հանդէսներուն
ներկայ գտնուելու համար աշխարհի չորս կող-
մէն եկող բոլոր պատուիրակները իրենց տեղեր-
նին կը վերադառնան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՈՐԲԱՆԵՆԼՄԻ ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹԸ

Վառնայի ազգայինը կը յիշեն թէ ասկէ տարի
մը առաջ Ռոբախնամի նախորդ գործ. ժողովոյ կող-
մէ հապճեպով սիկարի թուղթ մը հրապարակ
հանուած էր որ տեղակալ մամուլ (բացի Իրաւուն-
քէ, ՄԽ) և ազգայնոյ արդարացի բողոքներուն
արժանացաւ, վասն զի այդ թուղթը ուղղակի
Ազգ. Հիւանդանոցի սիկարի թուղթին կը ֆա-
սէր, ու Գործադիր ժողովը զգալով իր սխալը,
պարտաւորեցաւ յայտարարել թէ այդ թուղթը
հրապարակէն վերցուցած է, Բայց այս օրերս
առանց ու է զեկոյցի նոյն սիկարի թուղթը
նորէն հրապարակ հանուած է որու կողքին վրայ
ըստ առաջինոյ կը կարդացուին «Ի նպաստ Հայ
որբերու» ևն, խօսքերը: Այս իրողութիւնը արդի
Գործ. ժողովոյ ուղղութեանը ներկայացնելով,
կը յիշեցնեմ թէ ըստ օրինի ծանր պատասխա-
նատուութիւն կը հրաւիրէ իր վրայ, առանց ընդ-
հանուր ժողովոյ որոշման նոյն թուղթին վաճա-
ռումը թողյալտրելով, իսկ եթէ առանց իր գի-
տակցութեանը հրապարակ հանուած է, զոր այն-
պէս կը կարծեմ, ըսել է որ որբախնամի անունը
կը շահաւործուի, այս պարագային ալ Գործ.
ժողովը պարտաւոր է անմիջապէս այդ թուղթին
շրջաբերութիւնը դադարեցնել և կամ կողքերուն
վրայէն աւել տալ որբախնամի անունը, չը մոռ-
նալով սակայն մանրակրկիտ քննութեամբ մինչև
հիմա ծախուածներուն քանակութիւնը հասկնա-
լով, պէտք եղած տուգանքը առնելու:

14 Յունիս 1902

ԴԻՏՈՂ ՄԸ

Վառնա

(Պ. Դիտողի սոյն գրութիւնը ստանալէ վերջ
մենք ալ հետաքրքրուեցանք և մէկ քանի ծխա-
վաճառներու մօտ գտանք նոյն սիկարի թուղթէն,
բաւական քանակութեամբ, Մ. Խ.

ԺԱՄԱՆՅԻ ԲԱԺԻՆԸ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՂԱՐԻՒՆՈՒԹԻՒՆ

Որպէս զի առևտրական գոծերը չընդմիջուին տօն օրերու պատճառաւ, Անգլիացի վաճառականները իրենց ազգային բոլոր տօները ի մի գումարելով, աւարտին մէկ որոշում չաբաթը ամբողջ ութ օր կը տօնեն, որ կը կոչուի «ութօրեայ տօներ»։ Այս տօներու միջոցին, վաճառականները ընդհանրապէս օգափոխութեան կերթան ուրիշ անգլիական քաղաքներ։

Անգամ մը Մանչէսթրի վաճառականին մէկը որոշեց «ութօրեայ տօնը» Լոնտոն անցնել իր ընտանիքին բոլոր անդամներույր ու պաշտօնեաներովը։ Այս անձը վաճառատան մէջ ունէր կատու մը որ իր արաակարգ յատկութիւններով շատ սիրելի էր դարձած։ Խնդիր էր թէ բացակայութեան միջոցին ո՞ր ձգելու էր այդ կենդանին։ Պահ մը մտածեց հետը տանիլ, բայց անպատշաճ համարեց, ուստի բարեկամ վաճառականներու դիմեց ու խնդիրը անոնց պարզեց, որոնցմէ մին՝ — հետեւնիդ տարէք, — ըսաւ։

— Նախապէս ես ալ ատանկ մտածեցի, բայց կը վախէ՛ կատուն գրկած հիւր երթալ։

— Ուրեմն հոս ձեր ծանօթներէն մէկուն քով ձգեցէք, վճռեց ուրիշ մը։

— Բայց այն ատեն ալ ամբողջ բացակայութեան մտաւանջութեան մէջ կըլլամ, ատ ալ չըլլար։

— Իացէք այն ինչ վաճառատան տնօրէնին մօտ, աւելցուց ուրիշ մը, որ ձեր ալ մտերիմն է։ Նա շատ խելացի մարդ է ու կը յաւատարմորէ միջոց մը կը խորհի։

Ասոր վրայ մեր կատուի սիրահար վաճառականը անմիջապէս կը դիմէ վերոյիշեալ տնօրէնին։

— Պաշտօն տնօրէն, դուք ձեր վաճառականական գործառնութեանց մէջ շատ խելացի կը վարուիք, որովհետեւ փորձառութիւն ունիք։ Արդ, ձեզմէ խորհուրդ մը հարցնելու եկած եմ։

— Ինչ մասի։

— Վաղը Լոնտոն պիտի մեկնինք ու այս պատճառաւ ստիպուած եմ կատուն տեղ մը ձգել։ ձեզի կը հարցնեմ թէ՞ ո՞ր ձգելու եմ զայն որ թէ՛ բացակայութեան հանգիստ ընեմ եւ թէ՛ վերագարծիս զայն իր հիմակուան վիճակին մէջ գրտնեմ։ Յուսով եմ որ ձեր սրամտութեամբը գոհացուցիչ լուծում մը պիտի տաք ինձ համար խիստ կնճռոտ եղող այս խնդրոյն։

— Օհօ, կըսէ տնօրէնը հպարտ քմիծաղով

մը, ինչքան կնճռոտ խնդիր, ... Խորհուրդ կուտամ ձեզի ալ անոր վրայ չը մտածել։ Գացէք հանգստացէք, եւ առաւօտուն ամեն ինչ կարգադրուած պիտի գտնէք։

Եւ վաճառականը ուրախ զուարթ կը մեկնի։ Անոր մեկնելէն ետք պարոն տնօրէնը մատիտ մը առած կ'սկսի հաշուել թէ՛ կատուն մէկ օրուան մէջ ո՞րքան կուտէր։ Ժամուան մը աշխատութենէ վերջ կ'որոշէ ութ օրուան մէջ անոր ուտելիքը զատ զատ տմաններու մէջ գնել ու զանաք կարգաւ շարել։ ամեն մէկուն վրայ դրնելով մէկ մէկ տոմսակ որոնց պիտի գրուի երկուշարթիէն սկսեալ մինչեւ յաջորդ երկուշարթի օրերուն անունները, ասոնցմէ զատ կ'որոշէ մեծ ամանի մը մէջ ալ ջուր գնել։

Կատուն տէրը յաջորդ օրը առաւօտուն կանոն կը փութայ տնօրէնին այցելել։

— Ինչպէս, յաջողեցաք կարգադրել։

— Այո, բարեկամս, կատուն ձեր վաճառատան մէջ պիտի պահէք իմ այս որոշած եղանակաւ։

— Բայց նեղեցէք, եթէ փոխանակ մէկ օրուանը ուտելու, երկու օրուանը մէկէն ուտէ, յաջորդ օրը ի՞նչ ընէ, անօթի՞ պիտի մնայ։

— Բայց թող մտածէ որ եթէ երկու օրուանը մէկանց ուտէ, երկրորդ կամ վերջին օրը անօթի կը մնայ։

— Սակայն կատուն խելք ունի՞ որ մտածէ։

— Էհ ի՞նչ ընեմ, այսքանը ես մտածեցի, մնացածն ալ թող ան մտածէ։

Ահա անգլիական պաղարինութեան օրինակ մը որ նոյն իսկ անբան կենդանիներէն կը պահանջէ ճշգրտագոհ ըլլալ։

Փ. Պոլիս

Ս. Դիպերեան

ՅԵՐԵՐԻՔ

Աժաւս Բոժոժիկ եւ Ընկ.

Բարիկ

Զրոյց կայ թէ Սապահբեկեանի խմբագրութեամբ մօտերս Վառնայի մէջ «Երիտասարդ Հայաստան» անունով քաղաքական կիսաշաբաթաթերթ մը պիտի հրատարակուի։

Բոժ. — Խռին յուշալը ահա ան ատեն պիտի բացուի։

ԶԱՆԱԶԱՆՔ

Ինչպէս կապրի Վիլհելմինա քագուհին — Հունտայի թագուհիին մօտ ապրող մարդ մը շահեկան տեղեկութիւններ կուտայ թագուհիին ապրելու եղանակին վրայ։ Թագուհին շատ կանուխ կ'ընէ և ձիով պտոյտ մը կ'ընէ յաճախ, պալատ կը դառնայ ժամ 9ին, և իր դահլճին մէջ կ'ընդունի նախարարներն յորոց հետ կը խօսակցի պետական գործոց վրայ մինչեւ կէս օր, իր ամուսնութենէն առաջ միշտ ամանձինն կը ճաշէր իր մօր հետ ժամ 1ին։ հիմա իր սեղանին վրայ կը տեսնուին նաեւ պատուակալ տիկին մը և իր ամուսնոյն՝ Հայնրիխ իշխանին մէկ թիկնապահը։ Ընդունելութիւնները կսկսին ժամ 2ին ուրիշ սրահի մը մէջ։ Կուգան դեսպանները, բարձրատիճան պաշտօնատարք, և իր սենեկապետները։ Սովորաբար ճաշէն առաջ կ'առքով շրջան մը կ'ընէ, ձմեռն ալ կը չմշկէ։ Շաբաթն երեք անգամ ճաշի կը հրաւիրէ տասներկու հոգի։ Շատ քիչ անգամ թատրոն կերթայ, աւելի կը սիրէ գիշերները խօսակցութիւններով անցնել։ Երաժշտութենէն չախորժիր և շատ քիչ անգամ պալատին մէջ կը լսէ անոր ձայնը։ Բնականաբար ինք սովորած է դաշնակ զարնել, բայց իր անձին տէրն ըլլալէ վերջ մէկգի նետեց գործիքը, և նոյն իսկ իր յարկէն հեռացուց ափրիկեան երգէտն մը, որուն հետ կը զբօսնուր տղայ եղած ժամանակ։ Ընդհակառակն հոգի կուտայ նկարչութեան համար և յաճախ կաշխատի։ Մարմնական մարզանքներ կ'ընէ, և վերջապէս շատ կը սիրէ զբօսանքներու պարապիլ Լօի իր ամարանոցին մէջ։

... Դեռաքողքոյ Սիրունին. — Կ. Պոլսոյ Թօփհանէի քարափին վրայ ծխալաճառ Մատամ Մառի, որ բանաստեղծօրէն խօսելով, 60 գարուններ ողջունած ու այնչափ աշուներ գրկած է եղեր, վերջերս ինքզինքը չի կրնար զոպել 25 տարու Խրիսթոյին հետ սիրաբանելէ։ Խորամանկ քաղիքաւորան անտարբերութեամբ չպատասխաներ այս գարնանային սիրոյն, եւ նոյն իսկ կ'ամուսնանայ Մատամ Մառիի հետ, ոսկէ 2 ամիս առաջ, անոր խնդրանքին չկրնալով գիմադրել։ Աւելորդ է նկարագրել Խրիսթոյի այս երկու ամուսնան մեղքալուսինը, ուր ագամանդի պէս կը փայլէր մատամին շնորհալի. պշտանքներն ու նազանքները, ինչպէս միւս կողմէն ալ կը փայլէին

խնայած կարմրուկ ոսկիները, որոնց կարօտովը կը տոչորէր անձնազոհ երիտասարդը ու առիթ մը կը փնտռէր այդ ամուսնութիւնը արդիւնաւոր ընելու՝ «եւ երթանք» ի տեսակէտով։

Հինգշաբթի առտու, երկու ամուսիններ յուզիչ գիրկընդխառնումէ մը վերջ, խանութ կ'երթան ուր Խրիսթօ Բէթիէն ծխախոտ գնելու պատուակով կը բանալ դարակը ուր Բէթիի տետրակը եւ մատամին խնայած 60 ոսկիները կը գրտնուէին։ Բախթարիայի մէ պատիւ չեքելու աստիճան ճարպիկութեամբ տետրակին հետ կը գրպանէ նաեւ ոսկիները, եւ ուղղակի տուն երթալով ծպտելէ ետք կ'ընկնէ կը դնէ։ մինչդեռ ասդին մատամը՝ «կալի ի սուգ անմխիթար ընդ չուն Խրիսթայի...»։ Գեղաժպիտ մատամը հետզհետէ կը խոժոռէ իր արգէն խորշոմած ժանիքները եւ սրտի անհուն անձկութիւնով սիրահարին գալստեան կը սպասէ... որ կը հաւատեն թէ ծաղատիկին պիտի գայ։ Մատամին վիշտը կասկածի կը փոխուի, և կասկածն ալ արտասուքի, երբ դարակը կը բանալ եւ կը տեսնէ ոսկիներուն «վասն ի վերուստ ըլլալը»։

Մխիթարութիւն կը մաղթենք յիշեալ մատամին, որ իր սրտին հետ քսակն ալ կ'որսնցուց։

Մեր տիկիներուն մէջ ալ արդեօք այս տեսակ խելքի ծառայողներ կ'ան։

— 0 —

Յախճապակիէ ջոթակ. — Անգլիական շաբաթահանդէսի մը մէջ կը կարդանք թէ վերջերս սկսած է շինուիլ թօռալէնէ ջութակներ ու մանտօլիներ, որոնք տախտակէ շինուածներէ շատ աւելի ներդաշնակ և զօրաւոր ձայներ կը հանեն եղեր։

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ՊԱՐՈՒՏԻՆ ԱՌ Ք. Ն.

Քննույ հետաճակ սեւ խոպոպիկներ
Սահին ակամջին եզրով վարուվեր.
Ու պզտիկ դողով ժածկոյին անշէջ
Կորած ուսերուն ճերմակութեան մէջ։

Նշիկ ֆեֆշիկ կործիք նունենի
Երջագգեսին սակ նրբին հոյանի .
Շառագոյն վարդի մը քերթիկներեն
Անելի դիտիչ հոն կը բարասեն :

Երկայն մեծախնայ քարքիչներու սակ
Մաղանոս ու խոշոր աչեր սեռուակ ,
Թռիկն արտալից հոգոյն վրայ բաց
Չոյզ պատահաններ սիրով արծարծուած :

Միշտ այն վարդագոյն շրթերի մէջեն
Այն չֆնաղ շրթեր որ բացուելու են ,
Միայն ժպետու եւ համբուրելու
Կը սահին արտին երգեր քրքումն :

Ոսթեայ մալերու քարձի վրայ յեց
Հոգեզմայլ վաղորուն կորակ երես ,
Հեւայ քրքուայ սեզ վարդի նման
Դեռ արշաղոսին բացուած կուսական :


Եւ նա կերագէ երագ մը անգոյ ,
Ինքն աչ դառնալով երագ մը հաճոյ ,
Եւ այն երագին մէջը դիտական
Թաղելով անեն բան աշխարհական :

Կը թոյի , սահի , պարե ժմսագին ,
Տանելով իւր հետ քոյորիս հոգին .
Ո՛ր—հոն , ուր տիտ իսկի խնդրախն
Կեանք քարեքասիկ եւ երջանկոտիւն :

Նման քրքումն հեզաճեմ սիրդին
Վե՛ս վե՛սումներով զնացոյ մանկային ,
Կըսէ . —սիրեցե՛ք ինձի պարուհիս ,
Անաղաւթ սիրով հոգով արտալից :

Եւ անենք սիրեն , գովեն կը ծաղիեն ,
Օրեր աշրպան , տոբեն ճշեն .
Իսկ նա սիգաֆայլ շենային վրայ
Գանձերով վառվառ հեւայ ճրվայ :

Եւ յետոյ կորչի կեղծ եւ ըսելով
Վարագոյրին սակ անուշիկ քաղով ,
Անելի դիտիչ երագի մը պէս .
Երիզի մ'եսեւ գուարք արտալից :



ԽՈՐԱՄԱՆԿ ՓԵՍԱՑՈՒ ՄԸ

Վերջերս էսնամ զառակարգին պատկանող երիտասարդ մը ամուսնանալու դիտաւորութիւն կունենայ . Հիմակուան հոյն դասակարգին ամուսնութիւնները գիտենք ա՛յ . 2-300 ոսկի դրամութիւն մէջ են առ առաւելն . (Թող որ 100 ոսկի առնողը 300 առած կը ձեւացնէ կոր :) Երիտասարդը քանի մը շաքաթ տուալ իրեն ծանօթ ընտանիքի մը ամուսնական առաջարկութիւն մը կընէ պատուաւոր կերպով , այսինքն , միայն 300 ոսկի դրամութիւնի փափաքելով , ինչ որ աներ—պապացուն կը դժկամակի տալ . Թէն փոսացուն մէկ քանի բարեկամաց հետ մերթ ընդմերթ «համոզիչ» այցելութիւններ կուտայ «ապագայ» աներո՛յն , բայց այդ դրամութիւնի խընդիրը միշտ առ կախ կը մնայ . ուստի տեսնելով որ համոզելը դժուար պիտի ըլլայ , միջոց մը կը խորհի՝ պիչիւնի դնելու համար աներցուն , որուն հետ քեֆիքսիւն է եղեր , մէկ քանի տարիներէ ի վեր հետը տեսակցութիւն ունենալու հետեանքով : Ասկէ երկու շաքաթ առաջ , կիրակի օր մը երբ նորէն այցելած էր մէկ քանի բարեկամաց հետ մէկտեղ աներ—պապացուն տունը , երիտասարդը այդ դրամութիւնի խնդիրը նորէն բանալով աներո՛յն սապէս կառաջարկէ ժպտադէմ .

—Հայրիկ , եկուր խնդիրը ուրիշ ձեւի մը տակ դնենք , մէջերնիս համաձայնութիւն մը գոյացնելու համար :

—Ի՞նչպէս :

—Եկու պէս մը բռնենք քեզի հետ , ով որ «ծով» բերնով 12 հաւկիթ կարենայ ուտել , 100 ոսկի կը շահի , այսինքն , եթէ ես ուտեմ , 300 ոսկի դրամութիւն պիտի տաս ինձի , իսկ եթէ դուն կարենաս ուտել , այն ատեն միմիայն 100 ոսկի պիտի տաս ինձի :

—Ես կուտեմ անանկ է նէ :

—Շատ աղէկ , կընդունիմ . բայց որպէս զի «խալմունք» մը տեղի չունենայ , գրաւս վերստին կը կրկնեմ . այսինքն եթէ դուն «ծով» բերնով 12 հաւկիթ ուտես , այն ատեն միայն 100 ոսկի դրամութիւն պիտի տաս ինձի , ապա թէ ոչ 300 ոսկի պիտի տաս :

— Բացայայտ է գրաւդ, ընդունեցայ և յառաջիկայ ուրբաթ օր ալ պիտի գործադրեմ:

— Շատ լաւ. (բարեկամներուն դառնալով)
դուք ալ վկայ էք, այնպէս չէ՞:

— (Միաբերան) — Այո, այո:

— Ու սրտեալ օրը ժամանակին տեղի կունենայ աղջկան հօրը տունը:

Տասը հագիւ չափ կը հաւաքուին սրահը. մէջտեղը կըսէր սեղան մը կը գտնուէր, որուն վրայ 12 հատ ստկուած հաւկիթ կար: Մէկ քանի պատուաւոր անձեր նախապէս աներ—պապան «ծով» ըլլալը կը հաստատեն, ինչ որ փեսացուն կընդունի առանց դժուարութիւն յարուցանելու, ու յետոյ զինքը կը հրաւիրեն որ գրաւը գործադրէ:

Աներ պապան սեղանին կը մօտենայ ու ձեռքը առաջին անգամ երկնցնելով հաւկիթ մը կառնէ ու բերնին մէջ կանհետացնէ մէկ վայրկեանի մէջ: Երկրորդ անգամ վերստին ձեռքը երկնցնելով հաւկիթ մը ևս առնելու վրայ կըլլայ, երբ փեսացուն ընդմիջելով, բարձրաձայն կըսէ.

— Սիրելի աներս, կորսնցուցիր գրաւդ:

— Կայնէ նայինք. տահա չը լմնցաւ:

— Խնդիրը հոն է արդէն, այլևս ծով չես որ:

— Ի՞նչ ըսել է տտիկայ:

— Բացորոշ է, չէ՞ մի որ ծով բերնով 12 հաւկիթ պիտի ուտէիր:

— Էյ հա՛:

— Հիմա մէկ հատ մը կերայի, ըսել է «այլևս ծով չես» ու մնացած 11 հաւկիթները «ծով» բերնով չէ որ պիտի կրնաս ուտել, հետեալար գրաւդ կորսնցուցիր:

Ներկաները միաբերան խնդալով.

— Վա՛յ գարշելի:

Աներ պապան (մօրուքը չոյելով) — Վա՛յ նըզովից արմատ. առիկա իմ քովս չկար:

Հարսնցուն (կամայ մը) — Էհ, հայրիկ, ի՞նչ ընենք, մենք ալ ճենեղը քիչ կը շինենք:

Ու միտնայնա թեմաք սրտշուեցաւ հարսնիքը. Վարդավառին գիմացի կերակրին կատարել, մենք պիտի երթանք, դուք ալ հրամանեցէք պսակի արարողութեան սր պիտի կատարուի ի Ս. * * * Եկեղեցին:

— Այս, սա հիմախտան փեսացունները...

ԳԻՄՄԷՆ

— o —

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ՈՒՋԱԳ

(Կէյքնն միասխեսենն տեղաւ)

— Հատի, հատի, չաբուդ օլուն, պիզ տէսէօյլէյէճէիլ:

— Էօթէյէ կիթ պէ պիրէ Հաչիկ, նէ՞ օլատար գըզլարըն արասընա սօգըլմուշուն. գարըլա՛ր աաւըմըսըն նէ՞ սին:

— Պընալլանմա պէ սէնտէ:

— Ասաբերթ հալա, հատի պազալըմ, «ըրա սէնին տիր:

— Քէնտի իչին հէրքէս ֆէնա,

Հիչ պիյէնմէզ պաշգասընա.

Տէվէ կիպի պօլուն ասար,

Ուն չուվալնա կիրէր չըգար.

Եինէ սիեա՛հ քէօլիւր կիպի,

Վէ զէվքէնիր հէր ալէմի:

Չօճուգ պիր գըրըգ թարագ չըգարըր:

— Պու քիմի՞ն եա, գըզլար:

— Ա՛, ա՛, սագըն տուլմաւըն. էյի քի կէլմէմիշ, քիւլիւմիլիլ հալալայա ուշուրուր:

— Քիմ մօրու:

— Թէ գօմշունուզ, օպիր չէշմէնին եանընտաքի:

— Պալա, ուճադ տէյիլ մի պէ, նէ՞ չաբալըմ, հէրքէսին պահթընա:

— Պիր ուճադ տա պէն սէօյլէյիմ:

— Սէօյլէ պազալըմ հատի:

— Էլիմտէ սարը քեահաթ,

Աղլարըմ սաաթ սաաթ:

Եարիմ օրտա պէն պուրտա,

Հիչ էտէ՛րմիլիմ րահաթ:

— Պազալըմ նէ՞ չըգաճագ:

— Սօմէ թէթէնին անալթարը տըր:

— Իշթէ պազընըզ, պու ուճադ տօղրու չըգտը. զալալընըն պէօյիլի, ասպազ օօրմի ճանճաղընա էօթէտէ եաթմըշ իքէն Սօմէ թէթէ հիչ րահաթ իտէ՛ր մի:

Հուկա — Պէն օնուն եէրինտէ օլսամ, պօլա—

ճայը պաղլալը պիր սաաթ էվվել կիտէր օնա
գալուշուրըմ:

Հաչիկ — Սըճագ սո՛ւ. եօգսա տէ՛իկ պան-
եօսունա մը կիտէյօրսուն պէ քի պօխճա պաղլա-
եօրսըն:

— Խայըր պէ. թօըրագ պանեօսունա, ի վե-
րին երուսաէմէ կիթմէք իշին:

— Նէ՞ սէօյլէյօրսուն պիրէ Հուկաս, ալլահ
կէճինտէն էյլէյէ. Սօօմէ թէթէ տահա պիղէ չօգ
լազըմ տըր:

— Բէք էյի ճանըմ, իսթէտիյի վաղըթ կիթ-
սին. պուրատ րահաթ տէյի տէտինիկ տէ՛ օն-
տան էօթիւրի սէօյլէտիմ:

— Արթըզըն սուսալըմ տա ուճագ սէօյլէ-
յէվմ:

— Գըզ Հրիստիմ, հատի սէն տէ հայճա պիր
ուճագ սէօյլէ. սիզ տէ պիղիմ կիպիալը կէօր-
տիւյիւնտէ մէրթէք սանմայօրսունուզ եա:

— Տէ գըզըմ, ութանմա, հատի, սէնտէ մու-
րատընա էրէրսին:

— Զահիկի (ծաղիկ) մը կը նմանիմ:

Գիշեր սորեկ կը պտըտիմ:

Բան չի հասկըսա այս աշհարհէն:

Հոգիս էլաւ փընտըրեւէն:

— Ա՛, ա՛, նէ՞ կիւզէլ տէ հայճա էօյրէնմիշ:

Հաչիկ — Մաշալլահ տէյին, նաղար վէրմէյին:

— Պէյէ՞նմէտին մի պիրէ, օնտան էյիսինի
սէն սէօյլէ պագալըմ:

— Սէօյլէյիմ տէ՛ տիննէյին:

Վագթընո կիւզէլճէ կէօրիւպ կէչիւրմիշէր:

Կիւլիւպ օյնամըշլար, եւմիշէր իշմիշէր:

Շիմտի իսէ արթըզըն սըֆըրը աթմըշ:

Տըռ տըռ սէօյլէնիպ պաշ շիշիւրիւէր:

Հուկաս — Ազընը էօրէյիմ Հաչիկ. եիւրէյիմ-
տէն սէօյլէտին:

Պիր մատմազէլ. — Բիմլէ՞ր իմիշ պուշլար
պիրէ:

— Աննայամատընըզ մը, պընագ ալայը:

Ասաքերթ հալա — Ըր՛հ, ուուրսուզլար սիզ
տէ, եա իսթէրսինիկ քի եաքաղարընըզ հենթ-
լիքլէր (խենթութիւն) իշին սէս չըգարմայալըմ.
պայսա, էօյլէ շէյ օլմազ:

— Տէ մօրու թագուշ, սէնտէ էսկիլէր վար տը:

— Եա եա, շու հօրօզ սէսի իշիթմէմիշէր-
տէն:

— Պէ հէյ ղալըմ, պէն սանա

նէ՛ էյլէտիմ քի ճանըմա

Եաշամայը թաք էթտիրտին:

Հաեաթըմը զէհիրլէտին:

— Զէք ուշարմ:

Պիր սաաթ անախթարը չըգտը:

— Աա՛ գըզմ, տէրլէր եա, եիւրէյի եանըգ.
ինսանա թէսէլլի եօգ տէյէ. պագ շու պիղիմ
գօգօշուն գըսմէթինէ. կէօղիւ քէօր օլսուն մու-
սիպէթին էնիյի օ բօսթալըն. ուշաճըմը եագ-
տը եանտըրտը, հէլպէթ օ տա պուլաճագ:

— Հուկաս պէ սէն տէ պիր ուճագ սէօյլէ:

— Սէօյլէյիմ պէ Հաչիկ:

Պիղէ վէրիւլէր տալիմա նասիհաթ:

Քէնտիլէրի ասլա տուրմազ ըրահաթ:

Գալկա կիւրիւթիւ հէր կիւն հէր սաաթ:

Պիրպիրլէրինի իտէրլէր պէրպաթ:

— Քիմ իմիշ պուշլար պիրէ Հուկաս:

— Բըթազլար օլմալը. կէլին իլէ Կալիանա
պիթիւն կիւն չէքիշիւլէր տէ՛ պիրիսի պիր ազ
եիւքսէք գօնուշուրսա՛ թալալայա աթըպ գալու-
րուրլար:

Հուկաս. — Խայըր. էօյլէ բըթտալլար չիւ-
րիւմիւշլէր իշին տէյիլ տիր: Պիլէնէ՛ կիւզէլ պիր
սագսը գաթմէրլի գարանֆիլ վէրէճէիմ:

(Տէվալի)

ՔԵՏԻ ԿԵՕԶԻԻ

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքեայէլէր. Մալիւմա.
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի՛ էյլէնճէ-
լէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշր օլունան մէզքիւր քիթապըն պիրինճի ճիւ-
աի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըմտգտաալը. Ծիյ 2 ֆրանք:

ԱՆՈՒՇԱՆՆԵՐ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

Կամ Աղջկան մը յիշատակարանը

Վէպ մը իրական կեանքէ

(Մամլոյ տակ)

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ գանձաւոր պատկերներ, հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գիրութիւն ընծայուելու համար:

Բաժանորդին է 1 ֆրանք, բոսթի ծախքը հրատարակչին վրայ:

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդաց:

Գոյանալիք հասցիքը ամբողջովին կը նուիրուի «Հայկական կարմիր եւջի» ընկերութեան:

Բաժանորդագրութեան համար գիմիւ հետեւալ հասցէին: ՄՈՒՐԱՏ ԵՐԱՆՈՅԵԱՆ

(Պուլկարիա)

ՎԱՌՆԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն

ՌԵՆԷ ՏԵ ԲՕՆ-ՃԷԻ

հեղինակութիւնը եղող

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ և բարոյալից վէպին

Հինգերորդ եւ Վեցերորդ թերթերը

Ամեն դասակարգի գիւրամատչելի ըլլալու համար, գիրքը մասաւորապէս, ճակն երեսներէ բաղկացեալ, շաբաթը երկու թերթ պիտի հրատարակուի և իւրաքանչիւր ճակն երեսը պիտի ծախուի **5 սանթիմի:**

Ա.Բ.ՎԷԼԷՐԷ 24-25 Բերթեր պիտի բաժնայ:

Վառնայի համար բաժանորդագին 1 Բ. Ռիփ Բաղաւմեան և առաստիմանի համար 1.20:

Վառնայի դուրս, Պուլկարիայ համար երեք թերթ մէկ ծրարով կը զրկուին. իսկ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարի մէջ. փոսթի ծախքը հրատարակչին վրայ է:

Փափաքողք պէտք է գիմին հետեւալ հասցէին:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂՆԱՆԻ

Վ.Ա.Յ.Ն.Ն.

Դրամի փոխարէն նամակագրութիւն կրնալու

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ՀԱՅԵԼԻ»

—♦—

Կը տպագրուին ամէն լեզուէ ալ յայտնուած հասցէտուած, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, թատերական աղբեր, տոմասակներ, գիրք և յայտարարութիւններ:

Գիրքերը յոյժ դիւրամատչելի:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնները ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

Այցեատուած տպագրել տուողներուն նուէր կը տրուի «Խնայէս դործածելու է այցաքարտը» անուն հրահանգի գրքոյկ մը:

ՅԱՆՁՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ

—o—

ԾԱԽՈՒ ԳԻՐԹԵՐ

Հետեւալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բառարան գիրք 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք:

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր.

Թրթումներ (ուսանաւոր)	25	սնդ.
Հովասուն	25	"
Արտասուածք	20	"

Թ. Գ. Հինալեան — Տեսական և գործնական Բերականութիւն Պուլկարեան լեզուի 1 ֆր.

Շէյքսպիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր

Բաղդախաղ պատկեր 25 սնդ.

Թաղաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկուտիները. կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահապիլէթին միւրեւեբութիւն, գովէտի պիւր բէրտէ. 50 սնդ.

Գողանճ գոծա եւ խօսք Էնֆիլէճի, գովէտի պիւր բէրտէ. 50 սնդ.

Печатница «Взаимность» — Варна